ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Յուլիսի 27

Սրանից 6 տարի առաջ մի քանի ազնների շնորհիւ ս. Փրկիչ և ս. Ստեփաննոս եկեղեցիների երեցփոխան ընտրվեցաւ պ. Յովհաննէս Վանցեանը, և նրա հաշուատեսներ նշանակվեցան պ. պ. Յովհաննէս աղա Յակոբջանեանցը, Յովակիմ Գեղամեանցը և Սարգիս Յարօյեանցը։ Այսպիսի ընտրութիւնը շատ կասկածաւոր էր ժողովրդեանը, քանի որ պ. Վանցեանը յայտնի էր իր վարք ու բարքովը, վատնել էր հօր թողած անհագին կարողութիւնը, և հաշուատեսների վրա յոյս չունէր, քանի որ մէկը աղա էր, իսկ միւս երկուսը ազգային գործերում միջամտում էին միայն իրանց անձնական շահերի ծառայութեան համար։

Եւ, յիրաւի, ժողովրդի կարծիքը ամենայն ճշդութեամբ կատարվեցաւ, որովհետև պ. Վանցեանը երբ այդ պաշտօնին հասաւ, ըստ հին սովորութեան ընկաւ գեղխութեան և չռայլութեան մէջ։ Այս ժամանակը պ. հաշուատես Յակոբջանեանը ի պատիւ ազնների չէզոքութիւն էր պահում, իսկ միւսները, այսինքն՝ Գեղամեանցը և Յարօյեանցը հանգիստ խղճով լռութիւն էին պահում։ Արդէն երկու տարին անցել էր, երբ պ. Վանցեանը իր բարեկամներին և ազգականներին հաշիւ էր ներկայացրել և նրանց գովութեանց և փառաբանութեանց արժանացել էր։ Ուստի այդ ուրախութիւնից յետոյ աւելի ջերմեռանդութեամբ շարունակեց իր գործունէութիւնը։ Չը նայելով որ հոգևոր իշխանութիւնը քանիցս անգամ հաշիւ էր պահանջում, չը նայելով որ ժողովուրդը թէ լրագիրների միջոցով և թէ առանձնապէս բողոքում էր նրա դէմ, բայց նա լսել անգամ չէր ուզում. միայն այսքան էր ասում թէ՝ ամեն բան պատրաստ է և հաշիւս մաքուր.—Վերջապէս ժողովրդի համբերութիւնը հատաւ։ Ամսոյս 23-ին մի քանի երիտասարդներ հարիւր և մի ստորագրութեամբ մի խնդիր ներկայացրին նորին գեր. սրբազան Սագինեանցին այն բովանդակութեամբ, որ նա անմիջապէս կնքել տայ նրա հաշուական մատեանները, որովհետև պ. Վանցեանի վարքուբարքը և չռայլ ծախսերը տալիս էին նրանց կասկածել, որ նա չէր կարող հաւատարմութեամբ և ամբողջապէս ծառայել ազգին, մանաւանդ անելով և այն, որ նա անկարող է երեցփոխան լինել, քանի որ համաձայն օրինաց չունի սեփական անշարժ կալուածք։

Նորին գերապատուութիւնը իսկոյն և եթ կանչել տուեց պ. Վանցեանին և յայտնեց նրան խնդրի բովանդակութիւնը։ Յիշեալ պարոնը այս բանս լսելով՝ այնպիսի շփոթի մէջ ընկաւ, որ նրա պատասխանները բաւական ժամու չափ անհասկանալի եղան։ Ի վերջոյ նա ուշքի եկաւ, սկսեց աղաչել և պաղատել եպիսկոպոսին ասելով. «Հայր, եթէ կամիս, կարող ես գլուխ փրկել»։ Տեսաւ որ ազատութիւն չը կայ, 2 ժամ միջոց խնդրեց մատեանները ներկայացնելու համար, և 4 ժամից վերջը բարեկարգիչ տէր Թադէոս քահանայի հետ ներկայացրեց 1879, 1880 և 1881 թ. մատեանները, որոնք տեսնելէն յետոյ տեսան որ երեքն էլ անգիր են, ինչպէս որ մաքուր ստացել էր, այնպէս էլ վերադարձրեց։ Նա այսպէս էր մտածել, որ սրանից աւելի պարզ հաշիւ չի լինի։

Նորին գեր. հրամայեց կնքել նրա սնտուկը, արկղը և մոմերի պահարանը, հրաժարեցնել նրան պաշտօնից մինչև հաշուատեսութեան օրը և ժամանակաւոր նրա տեղը նշանակել հոգևոր իշխանութեան կողմից տէր Եղիա Համբարձումեանցին, և ժողովրդի կողմից պ. Գէորգ Պառուղեանցին. իսկ արձանագրութիւնը հանդերձ մատեաններով և խնդրով ուղարկել ի կոնսիստորիա ի շուտափոյթ տնօրէնութիւն։ Այս հանդէսը տևեց 9 ժամ։

Քաղաքի մէջ լուր կայ, իբր թէ մի քանի ազններ ուզում են օգնել պ. Վանցեանին, բայց իմ կարծիքով նրանց կողմից մեծ սխալմունք կը լինի այդպիսի քայլ անելը, նա մանաւանդ որ վատ հետևանքներ կարող է ունենալ պ. Վանցեանի համար։ Իսկ ինչ կը վերաբերի այդպիսի պարոններին, որ նրանք պ. Վանցեանին յանկարծակիի բերաններին կնքում են զանազան անվայել ածականներով, դրանք հատուցումը ժամանակին կը ստանան։

***

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յուլիսի 2-ին

Անասելի տարածութիւն է ստացել հակահրէական շարժումը. Թափառական հրէաները հազարներով թողնում են Ռուսաստանը, որի համար շատ ուրախ է «Новое Время» լրագիրը, յայտնելով այն միտքը, թէ շատ լաւ կը լինի որ բոլորն էլ գաղթեն, որովհետև նրանք եկուորներ են և բուն ռուս տարրից ստանում, յափշտակում են նրա ապրուստի միջոցները։ Գիւղերում տարածվում էին կեղծ մանիֆեստներ և շրջաբերականներ, որոնք հրաւիրում էին ծեծել հրէաներին։ Ձեզ յայտնի է արդէն որ հակահրէական շարժման իսկական պատճառները քննելու համար ուղարկվեցաւ հարաւային Ռուսաստանը կոմս Կուտայսով։

Ռուս գիւղական ժողովուրդը միացնում է իր գաղափարի մէջ, որպէս ազգի թշնամիներին՝ հրէայ տարրը և երիտասարդ ուսանողութիւնը։ Պատահում է որ թէ գաւառներում և թէ մայրաքաղաքում ռուս ռամիկները մօտենում են և հարցնում են ուսանողներին. «ты студентъ или христіанинъ» (դու ուսանող ես թէ քրիստոնեայ)։ Ի հարկէ ուսանողը պատասխանում է թէ քրիստոնեայ է։

Չէրնոգորիայի արտակարգ դեսպանի Ս. Պետերբուրգում եղած ժամանակ ես նրան տեսայ կենդանաբանական այգիում։ Բօժադիր Պետրովիչի հետ կար մի ռուս օֆիցեր և հետևում էին նրան վեց չէրնօգօրցիներ իրանց ազգային զգեստներով հագնված։ Առհասարակ նրանք շատ գեղեցկատեսիլ և առողջակազմ մարդիկ են։ Մեծ ուշադրութեամբ նրանք նայում էին կենդանիների վրա։

Պատմեմ մի անցք, որ պատահել է նորերումս մեր Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցում։ Մեր հարուստները կարծում են, որ միլիոններ ունենալով, նրանք ամեն բանի մէջ իրաւունք ունեն խառնվել և ուրիշներին հրամայել։ Մէկ կիրակի օր, պատարագի ժամանակ, մի հայ ուսանող կանգնած է լինում եկեղեցում առանց չոքելու, երբ ամենքը չոքել են։ Պ. Սանասարեանը իսկոյն մարդ է ուղարկում պարոնի մօտ և ասել է տալիս նրան որ կամ չոքի, ուրիշների պէս, կամ եթէ չէ կարող չոքել, թող եկեղեցու ետևի դրան մօտ կանգնի, որպէս զի ժողովուրդը չը տեսնի որ նա չէ չոքում և նրանից օրինակ չառնի։

Ես ճշմարիտ չը գիտեմ, ինչ իրաւունքով պ. Սանասարեանը խառնվում է այնպիսի գործում որ իրան չէ վերաբերում։ Եւ միթէ մեր եկեղեցին ամեն մարդու ազատութիւն չէ տալիս աղօթել այնպէս ինչպէս ինքն է կամենում։ Կարծեմ մեր եկեղեցին այդ կողմից ազատ է։ Կան մարդիկ, որոնք կարծում են որ իրանց ձեռք բերած հարստութիւնը նրանց իրաւունք է տալիս մինչև անգամ ուրիշների խղճի գործերի մէջ խառնվելու։ Միթէ աղօթել նշանակում է անպատճառ ծնկները քարին գիպցնել։

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 յուլիսի

Ձեր պատուական լրագրի 135 համարում կարդացի մի յօդուած մի քանի անձանց ստորագրութեամբ, որի մէջ գրած էր իբրև թէ ես ձեր թատրոնում փորձի ժամանակ, մի քանի պարոնների ներկայութեամբ ասել եմ պարոն Կարապետ Մաղինեանցին, թէ նա և պարոն Տէր-Դաւթեանցն են ինձ ասել. «եթէ մեր դերասաններից մէկը համարձակվի մասնակցել օրիորդ Աստղիկի ներկայացմանը, նա էլ խմբումը չի լինի»։ Այդ խօսքերը բոլորովին սխալ են. ես այդ բանը առաջին անգամ լսել եմ օրիորդ Աստղիկից, երբ առաջարկում էր մասնակցել իր խաղին. Ահա նրա խօսքերը. «Վարդուհի, իմ խաղին կը մասնակցես.» ես պատասխանում եմ՝ «ինչու չէ»։ Բայց նա աւելացնում է թէ «եթէ քեզ էլ արգելեն, չը թողլ տան մասնակցելու ինչպէս ուրիշներին»։ Ես ընկնում եմ մտատանջութեան մէջ, թէ այս ինչ բան է, գուցէ մի բան կայ, ասում եմ նորան, կիմանամ, եթէ ընկերներս կը մասնակցեն, ես էլ կը մասնակցեմ։ Յետոյ այդ մասին հարցնում եմ պարոն Տէր-Դաւթեանցին թատրոնում (և ոչ թէ Ալէքսանդրեան այգիում) որից քիչ հեռու կանգնած էր Մաղինեանցը։ Տէր-Դաւթեանցը ինձ պատասխանում է. «օրիորդ Աստղիկը ինձ էլ այդպէս ասաց, բայց հաստատ չը գիտեմ, թէ որքան ուղիղ է այդ լուրը»։ Երբ պարոն Հովուեանցը այդ մասին ձեր թատրոնում ինձ հարցրեց, և նրա մօտ նստած էր պարտերում միայն պարոն Մաղինեանցը, ես ասացի մի և նոյն բանը. բայց չը գիտեմ թէ պարոն Հովուեանցը ինչից ստիպված և ինչու համար իմ ասած խօսքերը փոփոխեց...... Խմբագիր տէր, բարեհաճեցէք խնդրում եմ ի սէր ճշմարտութեան մի անկիւն շնորհել ձեր պատուական լրագրում իմ այս նամակին։

Օրիորդ Վարդուհի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարից սկսում ենք արտատպել բանասիրականի բաժնում պ. դօկտոր Փէշտիմալճեանի յօդուածը, որ տպված էր «Մասիս» լրագրի մէջ և որ իր ուղղութեամբ համապատասխան է մեր լրագրում յայտնված մտքերին Հայաստանի տնտեսական հարցի վրա։

—

Դուրս եկաւ «Արարատ» ամսագրի յուլիս ամսի տետրակը, նոյնպէս դուրս եկաւ «Փարոս Հայաստանի» հանդէսի յուլիս-օգոստոս ամիսների տետրակը։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Էմինի նոր գիտնական աշխատանքը Մովսէս Խորենացու մասին հետևեալ վերնագրով «Моисей Хоренскій и Древній эпосъ армянскій.» Գիրքը տպված է Մոսկվայում ներկայ 1881 թւին։ Կարդալուց յետոյ այդ գիրքը, կաշխատենք մեր կարողութեան չափ ծանօթացնել նրա հետ մեր ընթերցողներին։

—

Լսում ենք որ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանց չը կարողանալով համոզել ոչ ոքին էջմիածնի ճեմարանի ուսուցչութեան պաշտօնն ընդունելու, վերադառնում է Թիֆլիս առանց իր հետ որ և է ուսուցիչ բերելու։

—

Թիֆլիսեցիներին յայտնի է որ մեր քաղաքային դումայի ձայնաւոր պ. Պօլտարացկու նախա-

---

անուղիղ է կարծել թէ Եւրոպիոյ իրարանցիչ մշակին, գործաւորն անհատապէս կարող պիտի լինի մի օր զարգանալ մասնաւորապէս այնչափ որ կարենայ իր ճիգին ամեն կատարելագործութիւններն ձեռք բերել լոկ իր սեպհական նախաձեռնութեամբն։

Վերացական և տեսական գիտութիւնք հարկ են այդ անհատներու շահերուն, բայց միշտ ինքզինքնին մասնագիտութեանց նուիրած անձերէ կը սպասեն նոյն կիրառութիւնն։ Կազմակերպեալ մի գործարանի մէջ մի մասնագէտ կը բաւէ ամբողջ մի գործաւորներու խումբ կառավարելու համար։ Երբ մի հողի բերքն մանաւոր պարագաներով կը նուազի և գործաւորն անանկանալ կը սպառնայ, երբ մի գործուած կերպաս իր արժողութիւնն կը սկսի կորուսանել լաւագոյն հիւսուած մի կերպասի մօտ, եւրօպացի մասնագէտն է որ ցոյց կը տայ բերքն իր նախկին առատութեանն վերածելու կերպն, և կերպասն ազնուագոյն և քիչ ծախքով ստանալու համար նոր մի հնարք կուսուցանէ գործաւորին, նորահնար մի գործիք կը նուիրէ իրեն։

Ֆրանսայի վերայ երբ զմայլմամբ և արդարանալի նախանձով կը խօսիմք, պէտք չէ ուրեմն մոռնամք որ նա ի շնորհս իր 30 միլիոն աշխատաւորաց է որ կարողացել է այժմեան վիճակին արժանանալ։ Այդ աշխատաւորներն որք մի միայն պատրաստուած են ի գործ դնելու ինչ որ կը դայ ցոյց տալ իրեն մասնագէտն շնորհիւ իր բազմամեայ աշխատութեան, մասնաւորական զարգացման մասին տակաւին խիստ ետ մնացած են Գերմանիայի և նոյն իսկ Զուիցերիոյ բանւոր ժողովրդէն։

Ուսման ծաւալումն ընդհանրացնելու հարցն տակաւին Ֆրանսայի մէջ մի նոր հարց է։ Մէկ ամիս հազիւ կայ որ Ֆրանսայի մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մի անձ, խելամուտ մասին կարծեաց արձագանքն եղաւ երբ հրատարակեց թէ ժողովրդեան բարօրութիւնն ապահովելու համար արուեստավարժութիւնն առաջին տեղն պէտք է բռնէ նորա կրթութեան մէջ։ Այս ուղղութիւնն լաւ ըմբռնեց նաև Ռուսիոյ կառավարութիւնն, որ ժողովրդեան վիճակն լաւ ճանաչելով և իր երկդարեան վերացական և դասական (քլասիք) կրթութեան աղետաբեր պտուղներն տեսնելով, նորանոր միջոցներ ձեռք առաւ այս տարի, որպէս զի նախ ժողովրդեան արհեստական և հողագործական կրթութեան հոգ տարուի, և նոյն ատեն, լոկ նախնական դպրոցներուն առ այժմ առանց չափէ դուրս կարևորութիւն տալու, սոքա արուեստավարժութեան օժանդակն միայն որոշեց անել։ Շատ ատեն պէտք չէ տեսնելու համար թէ այս ուղղութեամբ որքան պիտի բարւոքի ռուս ժողովրդեան կացութիւնն։

Եւրոպիոյ մէջ այս կերպ առաջ ձեռք բերուած է մինչ ընդհանուր բարգաւաճումն։ Այն ժողովուրդներն որ պահ մի շեղել են այս բնական ուղղութենէն, ստիպուել են դառնալ անոր վերայ։ Մի բանակ ունենալու համար եւրօպացին նախ՝ նորա մի գոյութիւն տալու փոյթն կը տանի. և երբ գոհացուցիչ կերպով զայն կազմակերպեալ կը տեսնէ, այն ատեն միայն ամեն մէկ զինուորի մասնաւորական զարգացմանն կզբաղի, որով ամենայն կատարելութեամբք օժտեալ մի բանակ կը լինի այն։

Բայց արդի մեր հայ «ուսեալներն» կը պահանջեն Հայաստանի վերանորոգութիւնն ստանալ ժամանակակից տնտեսական գիտութեան պատուէրներէն հետևելով։

Տնտեսական գիտութիւնն որ միադարեան մի գիտութիւն է Եւրոպիոյ մէջ, մասամբ փորձառութեան վրայ հիմնուած է, բայց գլխաւորապէս տեսական հանգամանքներէն ծնունդ առած է։ Նորա քարոզած վարդապետութիւններէն շատերն տակաւին անորոշ և վիճաբանելի են, վասն զի ամեն երկրի մէջ հարստութիւն փոյթացնելու միջոցներն այլօրէն կը մեկնուին։ Ապա ուրեմն սոքա ամեն երկրի, ամեն ժողովրդեան, ամեն ժամանակի մէջ չեն կարող միակերպ լինել և նոյնանման հանգամանաց մէջ իսկ չեն կարող ի գործ դրուիլ։ Հետևաբար, երբ մեր ազգին ընդհանուր յառաջադիմութեան առթիւ, Եւրոպիոյ տնտեսագիտաց կարծիքներն յառաջ կը բերեն, իբրև իւրեանց կարծեացն նպաստաւոր, կուրօրէն մի ընդօրինակութիւն արած կը լինին։ Այս անխորհուրդ նմանողութեան պատճառաւն է ահա որ շատ անգամ այլ և այլ գործառնութեանց համար փորձող մարմիններն ընդունայն կը սպառեն իւրեանց ոյժերն։

Տակաւին Հայաստան չունենալով այն կազմակերպութիւնը և այն նիւթական զարգացումն որով կը փառաւորուին եւրոպական երկիրներն, այժմեան յառաջացած Եւրոպիոյ տնտեսագիտաց ամեն քարոզածն չեն կարող այս ժամուս և այս նահապետական պայմաններու մէջ գործադրելի լինել հայ գիւղացիին մօտ։ Տարը դար յառաջ, երբ Եւրոպիոյ ժողովուրդք մեր գաւառացւոց ազգայնոց արդի նիւթական վիճակն ունէին տակաւին, «Տնտեսագիտութիւն» ասուածն գիտական ֆորմիւլներ ստացած չէր դեռ։ Տեղային ընտիրական պէտքերն, ցամաքային պարփակումն (պլոքիւս) և ընդհանուր Եւրոպիոյ խռովութիւնէն յառաջ եկած նոր կացութիւնն ստիպեցին, շուրջ մի դար յառաջ, որ մարդիկ մասնաւորապէս ուսումնասիրեն թէ ո՛րք են արտադրութեանց, սպառմանց, փոխանակութեանց և այլն լաւագոյն եղանակներն։ Ապա ուրեմն երբ Եւրոպիոյ տնտեսագէտք կարծիք կը յայտնեն արհեստից, մշակութեան և ուսմանց յարաբերութեանց վերաբերմամբ, պէտք չէ որ այս կամ այն իսկ մեր ազգին համար կատարելապէս յարմարելի կարծենք, նոքա՝ որք յանուն այդ հեղինակաց պատգամներ կը տան։

Այժմ տեսնենք թէ ո՞րք են գիւղին պահպանող հանգամանքներն, ինչ պայմաններու մէջ կը գտնուի նա այժմ, և արդեօք թէ կէտ առ կէտ ժամանակակից բարգաւաճեալ եւրոպական դրութեանն հետևելով կարելի է շուտով մեր նպատակին մօտենալ։

(Կը շարունակուի)